«Կրթապիտակները (Open Badges)՝ որպես թվային երիտասարդական աշխատանքի և ցկյանս ուսումնառության գործիք»

Ձեռնարկ

2020

Գաղափար՝

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ, «ԿԱՀԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղ, «Համայնքը և երիտասարդները» երիտասարդական խորհրդատվական ՀԿ

Ստեղծագործական խումբ՝
Հերմինե Պապիկյան, Մարինե Նազարյան, Վահե Խաչիկյան, Վարսիկ Ներկարարյան

Վերջնական խմբագրում՝
Արուս Խաչատրյան

Ձևավորում՝
Անի Հարությունյան

«Կրթապիտակները՝ որպես թվային երիտասարդական աշխատանքի և ցկյանս ուսումնառության գործիք» ձեռնարկը ստեղծվել է «Նպաստելով թվային երիտասարդական աշխատանքին և շարունակական կրթությանը» ծրագրի շրջանակներում: Վերջինս իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից: Ծրագրի շրջանակներում «ՀԿ Կենտրոնը» համագործակցում է «ԿԱՀԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի ("Reimaging Recognition" (Եվրամիության ֆինանսավորմամբ) ծրագրի ներքո), Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի և «Համայնքը և երիտասարդները» երիտասարդական, խորհրդատվական ՀԿ-ի հետ: Ձեռնարկի նպատակն է համապարփակ տեղեկություն տրամադրել կրթապիտակների մասին՝ որպես երիտասարդական աշխատանքի ոլորտում կրթական արդյունքների վավերացմանը և ճանաչմանն ուղղված արդյունավետ գործիք:

Ձեռնարկի ամբողջական կամ մասնակի վերարտադրումը, հրապարակումը կամ տարածումը ցանկացած ձևով և ցանկացած միջոցներով թույլատրելի է միայն ոչ առևտրային նպատակներով և աղբյուրի պատշաճ հղման պայմանով:

Բովանդակություն

1. Նախաբան

2. Մի քիչ՝ կրթապիտակների պատմությունից

3. Անդրադառնալով թվային երիտասարդական աշխատանքին

3.1. Կրթապիտակները՝ որպես (թվային) երիտասարդական աշխատանքի գործիք

3. 2. Կրթապիտակները՝ որպես կամավորությունը զարգացնելու գործիք

4. Ինչպես են ստեղծվում կրթապիտակները

5. Ինչպես են ստանում կրթապիտակներ. ուղեցույց

6. Դեսից-դենից

7. Ինչ միջավայրերում կարելի է կիրառել կրթապիտակները

8. Հեղինակների մասին

1. Նախաբան

«Կրթապիտակների» (Open Badges) գաղափարն ուսումնասիրելու և 2016թ. սկսած մի քանի երիտասարդական ծրագրերում այն փորձարկելու արդյունքում «ԿԱՁԱ» հիմնադրամի համար պարզ դարձավ, որ գտել է անհատի կրթական փորձառությունն ու ձեռքբերումներն արդյունավետ կերպով ամրագրող և դրանց չափելիությանը նպաստող մի գործիք:

Իսկ 2018թ. մեկնարկեց Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ReImagining Recognition» («Վերաիմաստավորելով ճանաչումը») ծրագիրը, որը մշակվել էր՝ ելնելով համագործակից երկրների (Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, Ֆինլանդիա, Իռլանդիա, Լիտվա) կրթության և երիտասարդական աշխատանքի ոլորտներում գործող կառույցների ունեցած փորձից. նշված երկրներում կրթապիտակների կիրառության առաջին առանձին փորձերի հանրապատկերում նշմարվում էր ոչ ֆորմալ կրթության ուսուցողական արդյունքների չափման և գնահատման մեխանիզմների ներդրման կարիք: Ուստի ծրագրի շրջանակներում այս երկրների համագործակից կառույցները, իրականացնելով տեղական հետազոտություններ, փորձելու էին հասկանալ կրթապիտակների գործածելիությունն առհասարակ, ինչից հետո աշխատարանների միջոցով ստեղծելու էին իրենց նախատիպերը և ֆոկուս խմբային քննարկումների օգնությամբ նպաստելու վերջիններիս առավել լայն կիրառմանը:

Հենց այս ծրագիրն էլ հիմք հանդիսացավ մասնակից մի քանի կառույցների միավորմանը (*«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ, «ԿԱՁԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղ, «Համայնքը և երիտասարդները» երիտասարդական խորհրդատվական ՀԿ*)՝ իրականացնելու համար «Նպաստելով թվային երիտասարդական աշխատանքին և շարունակական կրթությանը» ծրագիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ստեղծված այս ձեռնարկն անդրադառնում է այժմյան թվային դարաշրջանում «թվային երիտասարդական աշխատանքին», այդ աշխատանքի արդյունքների չափելիության ու ճանաչման խնդիրներին և որպես լուծման տարբերակ՝ առաջարկում «կրթապիտակ» անվանված թվային գործիքը, որը հիմնված է «սովորել անելով» (learning by doing) սկզբունքի վրա:

Ձեռնարկի նպատակն է կրթապիտակները ճանաչելի դարձնել հասարակության առավել լայն շերտերին և ցույց տալ՝ ինչպես կարելի է կիրառել դրանք կրթական և աշխատանքային տարբեր գործընթացներում:

2. Մի քիչ՝ կրթապիտակների պատմությունից

Գլոբալացման մեր դարաշրջանում, որի կարևորագույն բնորոշիչներից մեկը տեխնոլոգիական հնարավորություններն ու դրանց հասանելիությունն են, ստեղծարարությունը, համագործակցությունն ու նորարարությունը մատնանշվում են որպես ցանկացած զարգացման առանցքային պայման՝ անձնային, հասարակական, թե պետական մակարդակներում, ինչն իր հերթին ձևավորում է սոցիալական ինստիտուտների ու նորմերի ամբողջական փոփոխության պահանջ: Միևնույն ժամանակ, եթե նախկինում «գրագիտություն» եզրույթը ենթադրում էր գրելու և կարդալու հմտություն, ապա այժմ այն ներառում է նաև «թվային և տեղեկատվական գրագիտություն» ասվածը՝ «21-րդ դարի հմտություններ» ընդհանուր անվան տակ:

Մեր օրերում **սովորելու** գործընթացը տեղի է ունենում ամենուր և անընդհատ՝ ինչպես ֆորմալ կրթական, այնպես էլ ոչ ֆորմալ և ինֆորմալ միջավայրերում ու թվային տիրույթում: Իսկ երբ դրան են գումարվում մի կողմից տեղեկատվության առատությունը, բազմազանությունն ու մեծ հոսքը, մյուս կողմից՝ տեխնոլոգիաների մշտական զարգացումը, նման պայմաններում անհատի աճի և գիտելիքների ամրագրումը բացառապես ավանդական դիպլոմների ու նմանատիպ փաստաթղթերի միջոցով խիստ սահմանափակ է թվում: Բանն այն է, որ բաց համացանցը ցանկացած տեղեկության, ինչպես նաև մասնագետների հասանելիության հնարավորություն է տալիս, ինչն իր հերթին հարթակ է դառնում նոր հմտությունների ձեռքբերման և ուսումնառության նոր ձևերի ստեղծման համար: Ուստի, մեծ հաշվով կարիք չունենք, որ բացառապես փորձագիտական հեղինակություն համարվող կառույցն անպայմանորեն տրամադրի մեզ մեր փնտրած տեղեկությունը կամ փորձը. դրա փոխարեն կարող ենք մեր ուզածը գտնել մեր շրջապատում, որը ներառում է նաև թվային տիրույթը: Այսպիսով, դասընթացները դուրս են գալիս դասարանների ու լսարանների պատերից. օրինակ՝ ցանկացած թեմայով կուրսեր կարող ենք գտնել այնպիսի բաց կրթական նախաձեռնությունների կողմից, ինչպիսիք են Coursera-ն, Edx-ը և այլն:

Այս համատեքստում վերացնելով կրթական մենաշնորհներն ու շեշտը դնելով անձի անհատական մոտիվացիայի վրա՝ Mozilla և MacArthur հիմնադրամները 2010թ. ձեռնամուխ եղան ստեղծելու մի համակարգ, որը թվային տիրույթում ամրագրում է անհատական կրթական բոլոր ձեռքբերումները, գիտելիքներն ու հմտությունները, տեսանելի և թափանցիկ կերպով ցուցադրում է դրանք, տեղափոխելի է, միևնույն ժամանակ հանդիսանում է ավանդական և պաշտոնական դիպլոմների ու փաստաթղթերի այլընտրանք: Համակարգն անվանվեց Open Badges, որը Հայաստանում տեղայնացնելու ընթացքում էլ «ԿԱԶԱ» հիմանդրամը 2016թ. կստեղծի «կրթապիտակներ» հայերեն համարժեքը: 2011թ. Mozilla և MacArthur հիմնադրամներին միացան ավելի քան 300 հասարակական կազմակերպություններ, պետական կառույցներ և ոչ ֆորմալ ու ինֆորմալ կրթության ջատագովներ՝ առաջնորդվելով «Կրթապիտակները՝ ցկյանս ուսումնառության համար» աշխատանքային փաստաթղթով: Իսկ 2012թ. ԱՄՆ-ի Չիկագո քաղաքի

«Չիկագոյի սովորելու ամառ» նախաձեռնությունը ոչ միայն կրթապիտակների կիրառման և տարածման շուրջ համախմբեց այլ մեծ ընկերությունների ևս, այլև ուսումնառության միջոցով երիտասարդներին ներգրավեց ամառային զբաղվածության մեջ: 2013թ. արդեն ավելի քան 1450 կազմակերպություններ թողարկում էին կրթապիտակներ, ինչը վերածվեց առավել մեծ շարժման և հիմք հանդիսացավ «Սովորելու քաղաքներ» նախաձեռնության համար:

Մեր մոլորակի արևմտյան կիսագնդում, որտեղ և ծնունդ է առել կրթապիտակների գաղափարը, մինչ այժմ շարունակվում են դրանց կիրառումը, զարգացումը և տարածումը, իսկ մենք տեղափոխվենք Եվրոպա:

Այսպիսով, ոգեշնչվելով Mozilla-ի կրթապիտակներից՝ եվրոպական մի քանի կառույցներ, որոնք շարունակաբար արձագանքներ էին ստանում ծնողներից առ այն, որ վերջիններս դժվարանում են հասկանալ կամ գնահատել իրենց երեխաների՝ ոչ ֆորմալ կրթության շրջանակներում տեղի ունեցող ուսումնառությունը, 2013թ. ստեղծեցին «Եզակի կրթապիտակներ» (UNIQUE Learning Badges) հարթակը: Քանի որ երիտասարդները սովորում և փորձ էին ձեռք բերում հիմնականում երիտասարդական աշխատանքի (այսուհետ՝ ԵԱ) համատեքստում կազմակերպվող միջոցառումների շնորհիվ, այս հարթակը հնարավորություն տվեց ԵԱ-ով, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությամբ զբաղվող կառույցներին ու անհատներին ստեղծել կրթապիտակների՝ իրենց նպատակներին համահունչ, միևնույն ժամանակ տարբեր, այդ թվում՝ պետական կառույցների կողմից ճանաչելի համակարգեր և կիրառել դրանք՝ որպես ուսումնառության ու ձեռքբերումների «պարգևատրման» միջոց: ԵԱ-ի և ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչելիությանը միտված այս նորամուծությունը սիրվեց, ընդունվեց և կիրառելի դարձավ եվրոպական մի շարք երկրներում, ինչպիսիք են Լիտվան, Էստոնիան, Ֆինլանդիան, Նիդերլանդները և այլն, ինչպես նաև ԵՄ Արևելյան գործընկերության երկրներից Մոլդովայում, Ուկրաինայում, որտեղ կան կրթապիտակների համակարգի ներդրման կարկառուն օրինակներ:

Իսկ հիմա՝ կրթապիտակների գաղափարի ներդրման մասին Հայաստանում: «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, ի թիվս այլ ոլորտների, 2008թ. ի վեր գործունեություն էր ծավալում նաև ԵԱ-ի ոլորտում՝ մասնավորապես զարկ տալով երիտասարդական ակումբների ստեղծմանը: Մեծապես արժևորելով երիտասարդների ինքնազարգացումը և մասնակցությունը՝ այնուամենայնիվ, միշտ հարց էր առաջանում, թե ինչպես «չափել» երիտասարդի մոտ նկատելի զարգացումը, սոցիալական ներգրավվածության աստիճանը, արժեքային համակարգի ձևավորումը/փոփոխությունը, որ տեղի էր ունենում ամենշաբաթյա թեմատիկ տարբեր ակումբների մասնակցելու արդյունքում: Եվ ահա 2016թ. ոգեշնչվելով եվրոպական հաջողված փորձից՝ հիմնադրամն իր երիտասարդական ծրագրերից մեկում Հայաստանում առաջինը ներդնում է կրթապիտակների պիլոտային համակարգ՝ www.badgecraft.eu հարթակում ստեղծելով իր ծրագրային խնդիրներից և ներգրավված երիտասարդների կարիքներից բխող կրթապիտակներ: Հայաստանում արձանագրելով նաև ոչ ֆորմալ և կրթական թվային հայալեզու գործիքարանների պակաս՝ հիմնադրամը հանձն է առնում նաև հայաֆիկացնել այս հարթակը: Հենց այդ ժամանակ էլ ստեղծվում է Open Badges եզրույթի հայերեն

«կրթապիտակներ» համարժեքը, քանի որ ուսումնառության և փորձառության արդյունքում մասնակիցը ստանում է «կրծքանշան/կոչում/պիտակ» (անգլ.՝ Badge)՝ միայն թե թվային բաց տիրույթում:



Նկ. 1

Նկար 1-ում պատկերված է վերը հիշատակված պիլոտային ծրագրի կրթապիտակների մի նախատիպ, որի «ԿԱՄԱՎՈՐ» կրթապիտակը, օրինակ, ստանում են՝ հիմնադրամի քաղաքացիական կրթության ծրագրի կամավոր դառնալով: Ծրագրի իրականացման 2 տարիների ընթացքում այս նախատիպը կիրառվել է մոտ 100 երիտասարդի կողմից և հնարավորություն է տվել նրանց փորձել իրենց ուժերը տարբեր կրթական և հասարակական գործունեությունների մեջ:

3. Անդրադառնալով թվային երիտասարդական աշխատանքին

Նախքան ԵԱ-ի մասին խոսելը հարկ ենք համարում ներկայացնել, թե ինչ է առհասարակ ԵԱ-ը, քանի որ առանց հասկանալու վերջինիս հիմնական գաղափարը դժվար կլինի պատկերացում կազմել թվային ԵԱ-ի մասին:

Երիտասարդական աշխատանք հասկացությունը միանմանորեն չի ընկալվում ամբողջ աշխարհում. տարբեր երկրներում այն սահմանվում է տարբեր կերպ, ուստի անարդյունավետ է փնտրել ընդհանրական և բոլորին հարմար սահմանում: Ստորև ներկայացնում ենք սահմանման մի քանի օրինակ:

Երիտասարդական աշխատանքի սահմանումներ	
ՀՀ (Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգ[1])	ԵԱ ես է համարվում երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանքը կամ աշխատանքը, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը:
Եվրախորհուրդ	ԵԱ-ը լայն ընկալում ունեցող եզրույթ է, որն իր մեջ ներառում է **սոցիալական, մշակութային, կրթական, բնապահպանական և քաղաքական** տարաբնույթ գործունեություններ երիտասարդների կողմից, նրանց հետ և նրանց համար՝ անհատական կամ խմբային ձևաչափերով:

[1] arlis.am/DocumentView.aspx?DocID=103633&fbclid=IwAR2bAK7mPDhQUIq2Tu9YsUua0SlfWHAI_4MOawnTNjuOx0Dlf7J683wwzSY

Եվրամիություն	ԵԱ-ն ընդգրկում է գործունեությունների շարք (օր.՝ **սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային և քաղաքական**), որոնք իրականացվում են երիտասարդների հետ, նրանց համար և նրանց կողմից՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության միջոցով:
Ֆինլանդիա	ԵԱ-ն ակտիվ քաղաքացիության առաջխաղացումն է՝ օգտագործելով երիտասարդների ազատ ժամանակը, երիտասարդների ինքնուրույնացումը, աջակցումը նրանց զարգացմանն ու անկախությանը, ինչպես նաև սերունդների միջև շփումներին ու գործակցությանը:
Անգլիա	ԵԱ-ն այնպիսի միջավայրի ստեղծման գործընթացն է, որտեղ երիտասարդները կարող են ընդգրկվել ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթական գործունեությունների մեջ:
Միացյալ Նահանգներ և Կանադա	ԵԱ-ը ցանկացած այնպիսի գործունեությունն է, որը երիտասարդներին ընդգրկում է համակարգված ծրագրերում, այդ թվում՝ բնապահպանական, կրթական, սոցիալական բնույթի, ինչպես նաև դիզայներական:
Լիտվա	ԵԱ-ը սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքական կամ ցանկացած այլ տեսակի գործունեություն է՝ իրականացված երիտասարդների կողմից, նրանց հետ կամ նրանց համար, որի նպատակն է ներգրավել և ներառել երիտասարդներին իրենց սոցիալական միջավայրում և զորացնել նրանց, որպեսզի գիտակցաբար և ակտիվորեն մասնակցեն մասնավոր և սոցիալական կյանքին:

Այս սահմանումներից պարզ է դառնում, որ ԵԱ-ը գործընթաց է, որը նպաստում է երիտասարդի համընդհանուր զարգացմանն անձնային և սոցիալական մակարդակներում ու «կյանքի հմտությունների» ձեռքբերմանը: Եվ սրա իրականացման համար կիրառվում են տարբեր մեթոդներ:

Սովորաբար առանձնացնում են ԵԱ-ի հետևյալ տեսակները՝ բաց ԵԱ, երիտասարդության տեղեկատվություն և խորհրդատվություն, երիտասարդական ակումբներ, երիտասարդների մենթորություն: Վերջիններս շատ արդյունավետ կերպով իրականացվում են նաև Հայաստանում:

ԵԱ իրականացնող անձը համարվում է երիտասարդական աշխատող:

Այսօր, երբ երիտասարդությունն իր կյանքի մեծ մասն անցկացնում է թվային տիրույթում, կարիք կա համապատասխանեցնելու ԵԱ-ը նաև այդ իրականությանը, քանի որ, ըստ էության, «ԵԱ-ն իրականացվում է այնտեղ, որտեղ երիտասարդն է»:

Թվային ԵԱ-ը երիտասարդական աշխատանքի առանձին տեսակ չէ և չի կարող իրականացվել առանց համադրելու այն ԵԱ-ի ավանդական ձևերից որևէ մեկի հետ:

Իրականում, թվային ԵԱ-ը չպետք է սահմանվի որպես ընդամենը ԵԱ-ի առցանց իրագործման մոտեցում, այլ պետք է ներառի ԵԱ-ի բոլոր ձևերն ու մեթոդները կամ դրանցից առնվազն մեկը: Թվային ԵԱ կարող է համարվել, օրինակ, համացանցի ընձեռած տեխնիկական հնարավորությունների միջոցով երիտասարդական ակումբներ կամ խորհրդատվություն և իրազեկման միջոցառումներ իրականացնելը, ինչպես նաև դեմ առ դեմ ԵԱ-ում թվային գործիքների կիրառումը: Կարելի է ասել, որ թվային ԵԱ-ն օգնում է երիտասարդական աշխատողին «հասնել» երիտասարդներին և նրանց հետ աշխատել իրենց ավելի հարմար և հաճելի պայմաններում:

Թվայնացման և երիտասարդության հարցերով ԵՄ փորձագիտական խումբը 2017թ. ամփոփել է թվային ԵԱ-ի սահմանումը հետևյալ կերպ՝

- Թվային ԵԱ՝ նշանակում է ԵԱ-ի մեջ թվային գործիքների և տեխնոլոգիաների գործնական կիրառում կամ դրանց վերաբերյալ անդրադարձ:
- Թվային ԵԱ-ը ԵԱ-ի մեթոդ չէ. այն կարող է ներառվել ԵԱ-ի ցանկացած տեսակում:

- Թվային ԵԱ-ը նույն նպատակներն ունի, ինչ ընդհանուր առմամբ ԵԱ-ը, և ԵԱ-ում թվային գործիքների ու տեխնոլոգիաների կիրառումը միշտ պետք է միտված լինի այդ նպատակների իրականացմանը:
- Թվային ԵԱ-ը կարող է իրականացվել ինչպես առցանց միջավայրում, այնպես էլ դեմ առ դեմ ձևաչափով կամ այս երկուսի համադրմամբ:
- Թվային գործիքները և տեխնոլոգիաները կարող են կիրառվել ԵԱ-ում թե՛ որպես գործիք, թե՛ որպես ուսումնական գործընթացի բովանդակություն:
- Թվային ԵԱ-ն սերտորեն փոխկապակցված է մեդիագրագիտության հետ, ինչը ենթադրում է մեդիաների, դրանց վերլուծության և մեդիագործիքների կիրարկման վերաբերյալ բավարար գիտելիքների տիրապետում երիտասարդական աշխատողի կողմից:

Թվային ԵԱ-ն արագ զարգացող և դինամիկ ոլորտ է:

Չենք կարող խոսել թվային ԵԱ-ի մասին և անտեսել մեդիագրագիտության բաղադրիչը, քանի որ դրանք փոխկապակցված են: Եթե երիտասարդական աշխատողները չունենան բավարար գիտելիքներ մեդիաների, դրանց վերլուծության և, իհարկե, մեդիագործիքների կիրարկման մասին, ապա անիմաստ կլինի խոսելը թվային ԵԱ-ից և դրա կիրառությունից:

Բազմաթիվ թվային գործիքների շարքում, որոնք (թվային) ԵԱ-ը դարձնում են առավել հարուստ, ուսումնական և ժամանցային, կրթապիտակները հանդիսանում են անհատի ձեռքբերումներն ամրագրող և տեսանելի դարձնող միջոց: Հետևաբար դրանք կարող են փոխարինել նաև դասական հավաստագրերին ու դիպլոմներին:

Այսպիսով, հաջորդ բաժիններում կպատմենք կրթապիտակների մասին՝ որպես մի գործիք, որով կարելի է ճանաչելի դարձնել ԵԱ-ում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքները:

3.1. Կրթապիտակները՝ որպես (թվային) երիտասարդական աշխատանքի գործիք

Մինչ անդրադառնալը կրթապիտակներին՝ որպես հետաքրքիր և արդյունավետ գործիքի, ներկայացնենք, թե ինչ են դրանք ընդհանրապես: Մեզ, թերևս, առավել հայտնի են շքանշաններն ու կրծքանշանները, որոնք, շնորհվելով անհատին որոշակի ձեռքբերումների, իրականացրած սխրանքների համար, մի կողմից հաստատում են նրա իրագործումները, մյուս

կողմից՝ պարտավորեցնում ավելի լավը լինել, ավելիին հասնել: Անհատի գիտելիքների և ձեռքբերումների մասին հավաքական տվյալներ տրամադրում են նաև դիպլոմները, սերտիֆիկատների տարբեր տեսակները՝ դասականը, Youthpass-ը, որը տրվում է ԵՄ ծրագրերին մասնակցելու համար, և այլն: Այնուամենայնիվ, այս տիպի հավաստագրերը մանրամասն, տեսանելի և թափանցիկ կերպով չեն ներկայացնում իրենց «պարունակությունը», այլ զուտ տալիս են տեղեկություններ այն մասին, որ, այո՛, այս կամ այն անձն ավարտել է, օրինակ, Երևանի պետական համալսարանի այսինչ ֆակուլտետը և ունի համապատասխան գնահատականներ այդ ֆակուլտետին բնորոշ առարկաներից: Ինչպես ընդունված է, նման հավաստագիրը ներկայացվում է գործատուին, իսկ վերջինս էլ, ինչպես հայտնի է, ցանկանում է հավաստիանալ՝ արդյոք տվյալ անհատն ունի համապատասխան փորձ նշված ոլորտում: Բայցևայնպես, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հավաստագրերում ոչ մի կերպ չի երևում ձեռքբերված փորձը, ավելին՝ ֆորմալ կրթական ներկայիս համակարգը բարելավման շատ տեղեր ունի գիտելիքի և փորձի համադրման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրեր պատրաստելու հարցում: Մյուս կողմից՝ մեր երկրում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) բազմազանությունն ու լավ զարգացած ապարատը հնարավորություն են տալիս ֆորմալ կրթական համակարգին զուգընթաց ԵԱ իրականացնել ոչ ֆորմալ կրթական տարատեսակ միջոցառումների միջոցով, ինչն էլ իր հերթին հիմնականում ապահովում է երիտասարդների փորձառությունը:

Ապրելով և արարելով թվային դարաշրջանում՝ մասնագիտական և անհատական աճի, գիտելիքների, փորձի ամրագրումը շատ պրակտիկ է դառնում թվային գործիքների կիրառմամբ: Կրթապիտակը դրանցից մեկն է: Վերջինս՝ որպես գնահատման ոչ ավանդական գործիք, ներկայացնում է անհատի ուսումնառության գործնական արդյունքները՝ գիտելիքները, հմտությունները, ինչպես նաև նրա հետաքրքրություններն ու ձեռքբերումները:

Սկսենք նրանից, որ անհատը ստանում է կրթապիտակներ թվային տիրույթում՝ www.badgecraft.eu* կայքում ստեղծած իր օգտահաշվի միջոցով՝ իրականացրած աշխատանքի/փորձառության դիմաց: Յուրաքանչյուր կրթապիտակ ունի իրեն բնորոշ **պատկեր՝** տեսողական առումով գրավիչ և տպավորիչ լինելու համար, պարունակում է **հստակ տեղեկություն** այն մասին, թե ինչ է իրագործել, սովորել, կազմակերպել, ձեռք բերել անհատը, որի շնորհիվ ստացել է որևէ կրթապիտակ, ինչպես նաև **առաջադրանքներ,** որոնք «սովորել անելով» (learning by doing) սկզբունքը կյանքի կոչող գործողություններ/գործողությունների շարք են ենթադրում (Տե՛ս նկ. 2):





Նկ. 2

Նկար 2-ում բերված կրթապիտակի օրինակում հստակորեն ներկայացված է՝ ինչի համար է այն շնորհվում անհատին և ինչ տեղեկություն է պարունակում այն ըստ պահանջի ներկայացնելու դեպքում:

***** Իհարկե, գոյություն ունեն նաև այլ հարթակներ, սակայն սույն ձեռնարկի՝ կրթապիտակներ ստեղծելու և ստանալու վերաբերյալ բովանդակությունը հիմնված է գլխավորապես հենց այս կայքի առաջարկած փորձառության վրա մի քանի պատճառներով. մի կողմից հիմնականում հենց այս հարթակից են օգտվել կրթապիտակները հայաստանյան կրթական իրականություն ներմուծած առաջին կառույցները, մյուս կողմից՝ այն հատկապես արդյունավետորեն կիրառելի է սկսնակների համար, որոնց էլ ուղղված է ձեռնարկը:

Կրթապիտակը ձեռք բերելու համար **ստացողը** պետք է ներկայացնի պահանջվող առաջադրանքների իրականացման **ապացույց** (նկարի, տեքստի կամ տեսանյութի տեսքով), որն անհատի զարգացման և ձեռքբերումների հավաստումն է: Կա նաև մյուս կողմը՝ կրթապիտակ **շնորհողը** (կազմակերպություն, անհատ՝ ծրագրի պատասխանատու, երիտասարդական աշխատող և այլն), որը հաստատում է, որ առաջադրանքն իրականացվել է պատշաճ կերպով, իսկ հակառակ դեպքում՝ խրախուսում ձգտել ավելիին: Այս

տեսանկյունից **շնորհողը** կրթապիտակ ստացողի ավագ ընկերն է, մենթորը, որը ոչ թե վերահսկում է իրականացված աշխատանքը, այլ ապահովում է կրթական միջավայր՝ հնարավորինս դասեր քաղելու կրթապիտակի առաջադրանքներից և վերհանելու անձնական ներուժը:

Այսպիսով, մեծ հաշվով կրթապիտակն ունի հետևյալ կառուցվածքը՝

- **պատկեր՝ կրթապիտակի անունով,** *ինչպես առարկաները՝ դիպլոմում,*
- **նկարագրություն**, թե ինչի համար է այն շնորհվում անհատին՝ *դիպլոմի գնահատականի փոխարեն,*
- **առաջադրանքներ,** որոնք պետք է իրագործել կրթապիտակը ստանալու համար, իսկ *իրագործումը փորձառության հիմքն է,*
- **ապացույց,** որն անհրաժեշտ է ներբեռնել՝ իրականացրած աշխատանքը փաստելու և հավաստելու համար,
- **շնորհող*,** որը հավաստում է կրթապիտակում ներկայացված առաջադրանքների պատշաճ իրականացումը:

* Կա կրթապիտակ շնորհելու 3 տարբերակ՝

- **շնորհում կառույցի/ծրագրի համակարգողի/հենց ստեղծողի** կողմից, որով շնորհողն իր առաջ խնդիր է դնում նպաստելու ծրագրում ընդգրկվածների զարգացմանն ու ուսումնառության որակի բարձրացմանը,
- **շնորհում ընկերակիցների կողմից.** իրարից սովորելու և իրար սովորեցնելու (peer to peer learning), ինչպես նաև միմյանց օբյեկտիվ գնահատելու «արվեստը» զարգացնելու նպատակով կրթապիտակների շնորհման կարգավորումները կարելի է նշել այնպես, որ որևէ մեկի՝ կրթապիտակ ստանալու հարցումը ներկայացվի միևնույն ծրագրում ընդգրկված ընկերակիցների հաստատմանը,
- **ինքնաշնորհում**, երբ իրականացնում ես որևէ առաջադրանք, ներկայացնում ես ապացույցը և ինքնաբերաբար ստանում կրթապիտակը, քանի որ արժանի ես, կամ քանի որ այլ մարդու կողմից հաստատման կարիք չկա, այնքան ակնհայտ է տվյալ կրթապիտակի՝ քեզ պատկանելու փաստը: Օրինակ՝ երբ կամավոր ես որևիցե կառույցում, որի ստեղծած կրթապիտակների համակարգում կա «Կամավոր» կրթապիտակ. այդ դեպքում պարտադիր չէ, որ շնորհողը, որն այդ կառույցում համակարգում է կամավորներին, հավաստիանա քո կամավոր լինելու հարցում. դա փաստ է, որի հիման վրա ուղղակիորեն ստանում ես համապատասխան կրթապիտակը:

—> Պատկեր

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
KASA Foundation

—> Շնորհող

Պարտաճանաչ թիմակից —> Անուն

Նկարագրություն

Այս կրթապիտակը ցույց է տալիս, որ ես միշտ ժամանակ եմ գտնում ներկա գտնվելու թիմային հանդիպումներին՝ ունենալով իմ ներդրումը: Կարողանում եմ նաև ինքս նախաձեռնել թիմային հանդիպումներ, երբ զգում եմ, որ կա դրա անհրաժեշտությունը:

Առաջադրանքներ

Առաջադրանք համար 1

Նշե՛ք, թե քանի հանդիպման եք մասնակցել:

Առաջադրանք համար 2

Ծրագրի ընթացքում նախաձեռնե՛ք առնվազն 5 թիմային հանդիպում՝ ակումբին վերաբերող հարցերը, ուժեղ և թույլ կողմերը, առկա խնդիրներն ու դրանց հնարավոր լուծումները, նոր գաղափարները քննարկելու համար:

Նշե՛ք վերջին հանդիպման ընթացքում քննարկված հարցերը:



Նկ.3

Ի գիտություն՝
Կա կրթապիտակի 2 տեսակ՝ ուղղակի **կրթապիտակ (badge)** և **մետակրթապիտակ (metabadge):** Առաջինը կառուցվածքային առումով բաղկացած է ընդամենը մեկ կրթապիտակից, իսկ բովանդակային առումով սահմանափակվում է մեկ թեմայով, մինչդեռ

երկրորդը պարունակում է մի քանի տարբեր կրթապիտակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթաթեմաները: Մետակրթապիտակ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախ ստանալ դրա բաղկացուցիչ հանդիսացող ուղղակի կրթապիտակները: Տե՛ս նկ. 1-ը, որտեղ առաջինը՝ «**Ներկայացման վարպետ»-ը,** մետակրթապիտակի օրինակ է. այն ձեռք բերելու համար նախ պետք է ստանալ «**Էթոսագետ»** և «**Շնորհանդեսագետ»** կրթապիտակները, որոնք ձեռքբերումների և բովանդակային առումներով, ինչպես նաև պարզից բարդ սկզբունքով լրացնում են իրար: Իսկ երկրորդը՝ «**Կամավոր»** կրթապիտակն ուղղակի ստանում են, երբ դառնում են տվյալ ծրագրի կամավոր:

3. 2. Կրթապիտակները՝ որպես կամավորությունը զարգացնելու գործիք

Մենք արդեն գիտենք, թե ինչ է կրթապիտակը. ժամանակն է պարզել մի կողմից՝ ինչպես կարելի է կիրառել այն կամավորների հետ աշխատանքն առավել համակարգված և արդյունավետ դարձնելու համար, մյուս կողմից՝ ինչպես կարող են կամավորներն օգտագործել կրթապիտակները դրանք ստանալուց հետո: Սակայն մինչ վերոնշյալ հարցերին անդրադառնալը նախ հասկանանք, թե ինչ է կամավորությունը, ինչու է կարևոր զարգացնել այն, և ով է կամավորը:

Ինչպես ԵԱ-ը, այնպես էլ կամավորություն հասկացությունն ունի բազմաթիվ սահմանումներ, սակայն մեզ ամենահոգեհարազատ ձևակերպումը հետևյալն է՝

Կամավորությունն անշահախնդիր՝ առանց ֆինանսական շահի հետապնդման գործունեություն է անհատի կամ խմբի կողմից, որը միտված է բարելավելու տվյալ հասարակության այլ անդամների կյանքը: Փոխադարձաբար, կամավորական գործունեությունը դրական է անդրադառնում նաև հենց կամավորի կյանքի որակի վրա՝ հնարավորություն տալով վերջինիս զարգացնել մասնագիտական, սոցիալական և անձնային տարբեր հմտություններ:

Գաղափարի ի հայտ գալու սկզբում կամավորը և կամավորությունը զուգորդվում էին զինվորական ծառայության հետ, և հասարակական ծառայությունների մատուցման իմաստով սկսել են կիրառվել միայն տարիների ընթացքում:

Կամավորությունն այժմ լայն տարածում ունի նաև Հայաստանում. գրեթե ցանկացած հասարակական կազմակերպությունում հնարավոր է ներգրավվել որպես կամավոր: Նման լայն «առաջարկի» պայմաններում երբեմն դժվար է կողմնորոշվել և ընտրել ճիշտ կազմակերպություն: Այո՛, ճիշտ այնպես, ինչպես կազմակերպությունն է ընտրում իր կամավորներին, այնպես էլ կամավորություն անել ցանկացող անձը պետք է ընտրի կազմակերպությունը՝ այն մի լավ ուսումնասիրելուց հետո: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել, թե կազմակերպությունն ինչ համակարգեր է մշակել կամավորների հետ աշխատանքը կազմակերպելու նպատակով. սա կարևոր է ինչպես պատկերացում կազմելու համար, թե ինչպիսի փորձառություն է ապագա կամավորին սպասվում այդ

կազմակերպությունում, այնպես էլ վստահ լինելու համար, որ վերջում հնարավոր է հասնել խոստացվող արդյունքին, քանի որ կազմակերպությունը հստակ պատկերացնում է այդ արդյունքին հասնելու ճանապարհը: Կարելի է այդ համակարգերը գնահատել հետևյալ հարցադրումների միջոցով՝

- Արդյո՞ք եղած համակարգերն առավել **ադյունավետ են դարձնում կամավորների հետ աշխատանքը**:
- Արդյո՞ք դրանք **օգնում են կամավորներին տեսնել ու գնահատել իրենց մասնագիտական և անձնային աճը**:
- Արդյո՞ք այդ համակարգերն ու մոտեցումները **ոգևորում, խրախուսում են կամավորներին և մղում անել ավելին:**
- Եվ վերջում՝ արդյո՞ք տվյալ կազմակերպության կողմից ընտրված համակարգը **զգայուն է կամավորների** հարակից, սակայն նույնքան **կարևոր կարիքների բավարարման հանդեպ**՝ ապահովության զգացում, ինքնադրսևորվելու հնարավորություններ, գնահատված ու արժևորված լինելու զգացում և այլն:

Ընտրված կազմակերպության՝ կամավորների հետ աշխատելու համակարգի արդյունավետության աստիճանը հասկանալու համար կարող է օգտակար լինել նաև նախկին կամավորների հաջող փորձի ուսումնասիրումը, օրինակ՝ նրանց հետ հանդիպելով և զրուցելով: Իսկ եթե հանդիպել ինչ-որ պատճառով հնարավոր չէ, ապա կարելի է նրանց հետ կապվել հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներից որևէ մեկով:

Խոսելով համակարգերից ու կամավորների հետ առավել արդյունավետ աշխատանքից՝ առաջարկում ենք այդ համատեքստում դիտարկել մասնավորապես կրթապիտակների կիրառումը: Վերջինս մի կողմից առավել համակարգված է դարձնում կամավորների հետ աշխատանքը, մյուս կողմից՝ կամավորների շրջանում ապահովում է առողջ մրցակցություն՝ միաժամանակ հնարավորություն տալով իրականացնել կամավորի՝ տվյալ ծրագրի ընթացքում անցած «ճանապարհի» որակական գնահատում:

Կազմակերպություններն ազատ են ստեղծել և զարգացնել կրթապիտակների սեփական համակարգերը՝ ելնելով իրենց թիրախային խմբերի առանձնահատուկ կարիքներից ու իրենց ծրագրային նպատակներից, կամ էլ կիրառել արդեն գոյություն ունեցող համակարգերը, որոնք համընկնում են իրենց առաջ դրված խնդիրներին: Առաջին դեպքում նրանք ստիպված կլինեն ավելի շատ ժամանակ և ջանք ներդնել, սակայն արդյունքում կունենան հատուկ իրենց թիրախային խմբի համար մշակված համակարգ, որը հաշվի կառնի իրենց կազմակերպության առանձնահատկությունները: Արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերի կիրառման դեպքում նրանք կխնայեն ժամանակ և, գուցե, ռեսուրսներ: Սակայն կարևոր է, որ մինչ տվյալ համակարգը կիրառելն այն համապատասխանեցվի ինչպես իրենց կազմակերպության, այնպես էլ իրենց թիրախային խմբի կարիքներին:

Արդեն նշվել է, որ կրթապիտակները հնարավորություն են տալիս «տեսանելի» դարձնել այն ստացողի՝ տվյալ դեպքում կամավորի գիտելիքներն ու հմտությունները: Հետևաբար դրանք օգնում են և՛ շնորհողին, և՛ ստացողին հստակ գնահատել առաջընթացը գիտելիքների և հմտությունների ձեռքբերման առումով: Ստորև կդիտարկենք կրթապիտակների կիրառման առանձնահատկություններն ու օգտակարությունն ինչպես **կազմակերպության**, այնպես էլ **կամավորի** տեսանկյուններից:

Կազմակերպությունները կարող են կիրառել կրթապիտակները որպես՝

- չափորոշիչ գործիք՝ քանակականից բացի որակական փոփոխություններն ամրագրելու համար,
- կամավորների հետ աշխատանքն առավել հետաքրքիր և նպատակային դարձնելու միջոց,
- կամավորների ձեռբերումների մասին համակարգված տվյալներ հավաքելլու գործիք:

Կամավորները կարող են կիրառել կրթապիտակները որպես՝

- գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու/զարգացնելու գրավիչ գործիք,
- սեփական ձեռքբերումներն ամրագրելու միջոց,
- ինքնակրթվելու հնարավորություն,
- հետաքրքիր առօրյայի գրավական,
- ինքնակենսագրականը (CV) հարստացնելու և բազմազանեցնելու միջոց:

Թվային այս դարաշրջանում կրթապիտակները հեշտացում են մեր գործը սեփական ձեռքբերումները ներկայացնելու առումով ևս, քանզի դրանք կարելի է կիսել սոցիալական և մասնագիտական այնպիսի հարթակներում, ինչպիսիք են LinkedIn-ը, Facebook-ը և այլն, ինչպես նաև ներառել ինքնակենսագրականում՝ ի տես ցանկալի լսարանի: Ի դեպ, կրթապիտակների համակարգը հնարավորություն է տալիս նաև գեներացնել սերտիֆիկատ այն բոլոր կրթապիտակներով հանդերձ, որոնք ստացողը կուտակել է իր օգտահաշվում:

4. Ինչպես են ստեղծվում կրթապիտակները

Կրթապիտակների ստեղծմանը ծանոթացիր հետևյալ տեսանյութի միջոցով՝

https://www.youtube.com/watch?v=XwD2bEmoZjc&fbclid=IwAR2uKQOR17sqK3JabOPm5Qfg95JEc1cwKAIjQYyBrw8Z0HKUNO8fAC1uooI&ab_channel=HerminePapikyan

5. Ինչպես են ստանում կրթապիտակներ. ուղեցույց

Կրթապիտակ ստանալու առաջին քայլը Badge Wallet հավելվածը հեռախոսի մեջ ներբեռնելն է:

*Կրթապիտակներից կարելի է օգտվել նաև առանց հեռախոսային հավելվածի՝ գրանցվելով https://www.badgecraft.eu * կայքում և միանալով որևիցե ծրագրի:*

Այս գլխում ներառված են հետևյալ հարցերի պատասխանները՝

1. Ինչպե՞ս գրանցել քո Badge Wallet օգտահաշիվը:
2. Ինչպե՞ս փոփոխել քո օգտահաշիվը:
3. Ինչպե՞ս ստանալ քո առաջին կրթապիտակը:
4. Ինչպե՞ս նավարկել Badge Wallet-ի քո օգտահաշվի ներսում:
5. Ինչպե՞ս լրացնել կրթապիտակ ստանալու քո հարցումը:
6. Ինչպե՞ս չեղարկել կրթապիտակ ստանալու քո հարցումը:
7. Ինչպե՞ս հաստատել կրթապիտակի ապացույցները:
8. Ինչպե՞ս կիսվել կրթապիտակների քո ձեռքբերումներով:
9. Վիզուալ մտքեր՝ բացատրելու համար թվային կրթապիտակները:

Դիտի՛ր բոլոր տեսադասերը հետևյալ հղմամբ՝ http://goo.gl/3qY9BL: Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելի՛ր https://www.badgewallet.eu կայք:

* Իսկ այս հղումով կարող եք ձեռք բերել ձեր առաջին կրթապիտակները՝ https://bit.ly/2KjiHje:





Download on Google play

Download on the App Store

1. Ինչպե՞ս գրանցել քո Badge Wallet օգտահաշիվը

1.1

Նշիր այն էլ. հասցեն, որը ցանկանում ես օգտագործել կրթապիտակներ ստանալու համար:



1.2

Ընտրիր Badge Wallet մուտք գործելու քեզ համար նախընտրելի մեթոդը. օգտագործիր ուժեղ գաղտնաբառեր:



1.3

Համոզվիր, որ հաստատել ես էլ.հասցեդ, որպեսզի կարողանաս ստանալ կրթապիտակներ:



2. Ինչպե՞ս փոփոխել քո օգտահաշիվը

2.1

Անցիր My Badges հատված և բացիր վերևի ձախ անկյունում գտնվող մենյուն:



2.2

Ըստ ցանկության՝ փոփոխիր քեզ վերաբերող տեղեկությունները:



2.3

Կարող ես փոխել/ավելացնել կրթապիտակներ ստանալուն միտված գործողությունների համար օգտագործվող էլ.հասցեն/հասցեները:



3. Ինչպե՞ս ստանալ քո առաջին կրթապիտակը

3.1

Անցնելով կառավահան (Dashboard)՝ սեղմիր Scan code կոճակը:



3.2

Սկանավորիր քեզ կրթապիտակ շնորհող կառույցի կողմից տրամադրված կրթապիտակի/ծրագրի QR կոդը:

3.3

Եթե QR կոդի տեսածրիչը (scanner) պատշաճ կերպով չի աշխատում, կարող ես նաև հավաքել կրթապիտակի կոդը:



4. Ինչպե՞ս նավարկել Badge Wallet-ի քո օգտահաշվի ներսում

4.1

Անցիր Organisations հատված՝ գտնելու կրթապիտակների այլ առաջարկներ քեզ կրթապիտակ շնորհող կառույցների կողմից:



4.2

Անցիր Projects հատված՝ տեսնելու կրթապիտակների քո ծրագրերը:



4.3

Անցիր My Badges հատված՝ տեսնելու և կառավարելու քո ձեռքբերումները:



5. Ինչպե՞ս լրացնել կրթապիտակ ստանալու քո հարցումը

5.1

Սեղմիր Start quest կոճակը, որպեսզի սկսես կրթապիտակը վաստակելու գործընթացը:



5.2

Իջիր ներքև, որպեսզի մուտք գործես կրթապիտակի առանձին առաջադրանքների էջեր և ներկայացնես դրանց իրականացման ապացույցները:



5.3

Ուշադրությամբ կարդա յուրաքանչյուր առաջադրանք և ընտրիր համապատասխան ապացույցներ՝ ներբեռնելու համար:



5.4

Ընտրիր ներբեռնվելիք ապացույցի տեսակը. կարելի է ավելացնել մի քանի ապացույց:



5.5

Համապատասխան պահանջի դեպքում դիմիր ներկայացված ապացույցի հաստատման համար:



5.6

Կախված առաջադրանքից՝ սպասիր հաստատման քո ընկերակիցների կամ ծրագրի պատասխանատուների կողմից:



6. Ինչպե՞ս չեղարկել կրթապիտակ ստանալու քո հարցումը

6.1

Անցիր այն կրթապիտակի հարցման էջ, որի ստացումը ցանկանում ես չեղարկել:



6.2

Բացիր աջ վերնամասում գտնվող մենյուն՝ չեղարկելու համար քո հարցումը:



6.3

Հարցումը չեղարկելու դեպքում ներբեռնված բոլոր ապացույցները կանհետանան:



7. Ինչպե՞ս հաստատել կրթապիտակի ապացույցները

7.1

Անցիր ծանուցումների հատված՝ տեսնելու ապացույցներ ստուգելու դիմումները:



7.2

Ուշադրությամբ կարդա առաջադրանքը և ստուգիր ներկայացված ապացույցը:



7.3

Հաստատիր կամ մերժիր ներկայացված ապացույցը և արձագանքիր մեկնաբանության տեսքով:



8. Ինչպե՞ս կիսվել կրթապիտակների քո ձեռքբերումներով

8.1

Անցիր այն կրթապիտակի էջ, որը ցանկանում ես կիսել որևէ սոցցանցում կամ մասնագիտական հարթակում:



8.2

Ընտրիր՝ որտեղ ես ուզում կիսել ձեռքբերումներդ:



8.3

Իմաց տուր աշխարհին ձեռքբերումներիդ մասին թե՛ վիրտուալ, թե՛ իրական կյանքում:



9. Վիզուալ մտքեր*՝ բացատրելու համար թվային կրթապիտակները

9.1

Mozilla հիմնադրամը ներմուծեց թվային կրթապիտակների չափանիշը՝ ներկայացնելու համար ցանկացած ուսումնառություն, հմտություն և ձեռքբերում:

*«Վիզուալ մտքեր» Բրայըն Մ. Մեթըրսի կողմից՝
http://bryanmmathers.com/

9.2

Կրթապիտակները հարուստ են տվյալներով, որոնք ամրագրված են կրթապիտակի պատկերի ներսում և հնարավորություն են տալիս «քեզ հետ վերցնել» ձեռքբերումներդ:



6. Դեսից-դենից

Կրթապիտակներ ստանալն օգնում է ինձ մտորել իմ գործունեությունների շուրջ, ինչի շնորհիվ բարելավում և զարգացնում եմ հմտություններս: Կրթապիտակներ հավաքում եմ, որպեսզի ինքս ինձ և այլոց համար լավ օրինակ ունենամ, թե ինչ եմ սովորել և ձեռք բերել: Պատրաստվում եմ հետագայում ներառել դրանք նաև իմ ինքնակենսագրականում:
Օգտատեր Լիտվայից

Կրթապիտակների միջոցով կարողանում եմ ավելի լավ հետևել նոր բաներ սովորելուս ընթացքին: Ձեռք բերածս հմտությունները հետագայում կարող եմ կիրառել աշխատանքային առօրյայիս մեջ: Կրթապիտակներ հավաքում եմ, քանի որ դրանք ձեռքբերումներ ունենալու հնարավորություններ են ստեղծում:
Օգտատեր Ֆինլանդիայից

Կրթապիտակներ ստանալու գործընթացը հետաքրքիր է, իսկ վաստակածդ կրթապիտակները տեսնելը բավարարվածության զգացում է առաջացնում: Դրանց միջոցով ավելի հեշտ է աշխատանք փնտրելիս փաստել իմ գործունեությունն ու փորձառությունը:
Օգտատեր Ֆինլանդիայից

Կրթապիտակների համակարգը կարծես ինքնակենսագրականի ինքնատիպ տեսակ լինի, քանի որ այն ամփոփում է իմ ողջ գործունեությունը: Կրթապիտակներ հավաքելու միջոցով ես ստանում եմ միավորներ կամավորական աշխատանքս համակարգող թիմի կողմից, որոնք կարող եմ օգտագործել այդ կազմակերպության տարբերանշանով ստեղծված տարբեր իրեր ձեռք բերելու համար:
Օգտատեր Ֆինլանդիայից

Կրթապիտակներ հավաքում եմ, նախ քանի որ հետաքրքրված եմ, հետո՝ դրանք դասարանից դուրս իմ զարգացրած հմտությունների և ձեռքբերումների ապացույցն ու ճանաչումն են, որոնք շատ կարևոր են իմ անձնային աճի համար և առօրյա կյանքում:
Օգտատեր Ուկրաինայից

Պատրաստվում եմ ընդունվել եվրոպական մի համալսարան: Հույս ունեմ, որ կրթապիտակները շատ լավ լրացում կլինեն իմ պորտֆոլիոյին:
Օգտատեր Ուկրաինայից

Արդեն մի քանի նոր ծրագրերում կրթապիտակներն օգտակար են եղել ինձ համար, քանի որ դրանք հստակ ցույց են տալիս հմտություններս և բավական մանրամասն ներկայացնում ճամբարում ձեռք բերածս փորձառությունը:
Օգտատեր Վրաստանից

Կրթապիտակները և դրանց դիզայնը միշտ գրավել են իմ ինքնակենսագրականը կարդացողի ուշադրությունը:
Օգտատեր Վրաստանից

Կրթապիտակները տեսանելի կերպով ցույց են տալիս իմ հմտությունները և, ինչը պակաս կարևոր չէ, հիմնված են հավաստի փաստերի վրա:
Օգտատեր Հայաստանից

Կրթապիտակներն ինձ օգնում են ավելի շատ հմտություններ ձեռք բերել: Կրթապիտակներ ստանալն ինձ շատ է ուրախացնում. հաճելի է տեսնել, թե քանիսն եմ հավաքում այդ պահին: Որոշ կրթապիտակներ ավելի հեշտ է ստանալ, քան մյուսները: Հավաքում եմ դրանք, որպեսզի աշխատանքի տեղավորվելիս փորձ ունենամ. պահում եմ իմ թվային պանակում (badge wallet), որպեսզի աշխատանք փնտրելիս ցույց տամ գործատուներին:
Օգտատեր Իռլանդիայից



7. Ինչ միջավայրերում կարելի է կիրառել կրթապիտակները

Ինչպես և հուշում է իրենց օրիգինալ անվանումը՝ Open (բաց) badges (կրթապիտակներ), կրթապիտակները ճկուն գործիք են՝ ունակ համապատասխանեցվելու ցանկացած կրթական գործընթացի և արտահայտելու վերջինիս արդյունքները, իսկ ստացողի դեպքում՝ արտացոլելու նրա անձնական կրթական ձեռքբերումները: Ուստի այստեղ կգտնես մի քանի առաջարկ, թե ինչպիսի կրթական գործընթացների համար և ինչ նպատակներով կարելի է ստեղծել և կիրառել կրթապիտակներ: Իհարկե, կարող ես չսահմանափակվել ստորև նշվածով և զարկ տալ երևակայությանդ՝ կրթապիտակները հոգուտ ստեղծողի և գործածողի կիրառելու համար:

1. Ֆորմալ կրթական գործընթաց

- **Ուսուցիչների համար՝**

Մեր օրերում ավելի ու ավելի են շեշտադրվում հետևյալ մտքերը՝ խրախուսել սովորողների կարողությունները և խտրականություն չդնել գնահատականի միջոցով, մատնացույց անել հնարավորությունները և նպաստել յուրաքանչյուր անհատի մեջ սեփական ուժեղ կողմերի բացահայտմանն ու կատարելագործմանը և այլն: Այս համատեքստում որևէ դասապրոցեսի կամ թեմայի համար ստեղծվող կրթապիտակները կարելի է կիրառել որպես՝

- «գնահատման» այլընտրանքային ձև, որը հիմնված է ոչ թե հենց գնահատական ստանալու, այլ «սովորել անելով» (learning by doing) սկզբունքի վրա,
- անհատական ուժեղ կողմերի վերհանման և շեշտադրման միջոց, օրինակ՝ գրավոր, բանավոր, լեզվական, բնագիտամաթեմատիկական և այլ ունակությունների, քանզի գիտենք, որ *յուրաքանչյուր անհատ յուրահատուկ է իր ձևով. անհրաժեշտ է միայն ստեղծել համապատասխան միջավայր՝ հնարավորություն տալու համար յուրօրինակությանը ի հայտ գալ,*
- քաջալերող միջոց՝ ավելիին հասնելու, ավելի լավը լինելու,
- գիտելիքի ամրապնդման միջոց՝ պրակտիկ գործունեության միջոցով:

- **Աշակերտների համար՝**

Խրախուսելով «հավասարը հավասարին» ուսումնառության տեսակը (peer to peer learning)՝ բարձր դասարաններում աշակերտները կարող են կրթապիտակներ պատրաստել իրենց համադասարանցիների համար՝ գիտելիքի և փորձի փոխանակման նպատակով:

-

- **Բուհերի համար՝**

Համագործակցելու, թիմային և կամավորական աշխատանքի, ներառականության արվեստը զարգացնելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթապիտակները կարող են ստեղծվել և կիրառվել՝

- ❖ ուսանողական խորհուրդների աշխատանքներն ակտիվ պահելու և բուհական միջոցառումների կազմակերպման մեջ հնարավորինս շատ ուսանողների ընդգրկելու համար,
- ❖ ուսանողական պրակտիկան առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար,
- ❖ օտար լեզուների ուսուցումն առավել դյուրին և հետաքրքիր դարձնելու համար:

2. Ոչ ֆորմալ կրթական գործընթաց

Ոչ ֆորմալ կրթությունը մեզ մոտ հիմնականում տեղի է ունենում տարատեսակ հասարակական, հատկապես՝ ԵԱ-ով զբաղվող կառույցների կրթական գործունեության միջոցով: Ուստի կրթապիտակների կիրառումը նրանց համար կարող է մի կողմից այս միջոցառումներից իրենց շահառուների որակական ձեռքբերումները չափելու և ուսումնառության արդյունքները վավերացնելու գործիք դառնալ, մյուս կողմից՝ հարստացնել և հետաքրքրացնել բոլոր կողմերի (կազմակերպություն, շահառու, մասնակից, աշխատակից) գործունեությունները: Այսպիսով, կրթապիտակները կարող են կիրառվել՝

- ❖ տարատեսակ դասընթացների (տեղական և միջազգային), երիտասարդական ակումբների կամ ծրագրերի իրականացման ընթացքում,
- ❖ ճամբարներում՝ ստեղծելով տարիքային առանձնահատկություններից բխող կրթապիտակներ,
- ❖ երիտասարդական և համայնքային նախաձեռնությունների զարկ տալու և դրանցում որակական չափանիշներ ներմուծելու նպատակով:

3. Աշխատանքային գործընթաց

Օգտակար կլինի աշխատավայրում ևս կիրառել կրթապիտակներ՝ մշտապես ինքնակրթվելու, աշխատանքում առավել հմտանալու, մոտիվացվելու և մոտիվացնելու, թիմային ոգին պահելու և ստեղծարարությանը զարկ տալու, կամ էլ աշխատանքային խրախուսանքի նպատակով:

8. Հեղինակների մասին

Մարինե Նազարյան
«ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

ԵԱ-ն ինձ համար երիտասարդներին իրենց իսկ մասնակցությամբ օգնելն է հասկանալ, թե ինչ ուղղությամբ և ինչպես են ցանկանում առավել արդյունավետ կերպով օգտագործել իրենց ներուժը, ինչի արդյունքում ունակ կլինեն ինքնուրույն կազմակերպել իրենց կրթական և անձնային աճը: Մեծ կարևորություն եմ տալիս թվային ԵԱ-ին, քանի որ անգնահատելի ու անթիվ են այն առցանց հնարավորությունները, որոնց շնորհիվ կարող ենք ապահովել մեր շարունակական (ինքնա)կրթությունը տարբեր ուղղություններով:

«Նախաձեռնողություն և ներգրավվածություն՝ առաջին հերթին հենց մեր ինքնակրթությունն իրականացնելու համար»:

Հերմինե Պապիկյան
«ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

ԵԱ-ը որոշակի աշխատանքի արդյունքում այն կայծն է, որ վառվում է երիտասարդի աչքերում, այն ոգևորությունն ու կողմնորոշվածությունն են, որ տեսնում եմ երիտասարդի մեջ: Իսկ թվային ԵԱ-ը մի կողմից իմ մասնագիտական գործունեությունը հարստացնելու, մյուս կողմից՝ թվային տիրույթում երիտասարդներին «հասնելու» միջոց է: Ես երիտասարդական աշխատող եմ, որովհետև մեր երկրի, հասարակության և ընդհանրապես՝ մոլորակի ապագան տեսնում եմ երիտասարդին զորացնելու և կրթելու մեջ:

«Կյանքի իմաստը ինքդ քեզ գտնելու մեջ չէ: Այն ինքդ քեզ կերտելու մեջ է»: Բերնարդ Շոու

Վահե Խաչիկյան

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

ԵԱ-ն ինձ համար հնարավորություն է «առողջացնելու» իմ միջավայրն ու հասարակությունը և հզորացնելու պետությունը: ԵԱ-ն ինքնաբացահայտման, զարգացման ու ինքնահիրացման հիանալի միջոց է: Այն թույլ է տալիս օգտակար լինել ինքս ինձ ու հասարակությանը և լինել հնարավորինս ներդաշնակ: ԵԱ-ն ինձ հնարավորություն է տալիս կյանքի կոչել ստորև մեջբերածս կարգախոսը:

«Թող նա, ով մտնում է ձեր կյանք, ձեզնից հեռանա՝ դառնալով ավելի լավն ու ավելի երջանիկ»: Մայր Թերեզա

Վարսիկ Ներկարարյան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղ

ԵԱ-ն ինձ համար հնարավորություն է ներդրում ունենալու համայնքիս ու երկրիս զարգացման և կայացման գործում: Ես զբաղվում եմ ԵԱ-ով, որովհետև համոզված եմ՝ երիտասարդները մեր երկրի ներկան են ու ապագան և թե ինչպիսին կլինեն այդ ներկան ու ապագան՝ կախված է մեզնից յուրաքանչյուրից:

«Եվ միակ մարդն, ումից պիտի լավը լինեք, դա դուք եք երեկ»: Ֆրեյդ